Արշակունիների մի տունը Հայաստանի թագաւոր դառնալուց յետոյ, նրան տեսնում ենք Պարխարի ստորոտին, վաղեմի կալուածներին կապուած, նոյն իսկ Պոնտոսի հետ սերտ յարաբերութեան մէջ: Այս յարաբերութիւնը չէր կարող հին-տոհմական եւ ազգակցական չլինել. երեւում է, որ արիւնակցական կապեր ունէին Պալխարի նախարար տիրողները Պոնտոսի իշխանների հետ: Արշակունիների Հայաստանի մէջ հաստատուած չրջանում, Պոնտոսումն էլ հաստատուած ենք տեսնում Միհրդատների տիրող տունը, որի ծագումը, հելլէն պատմագիրներն ասում են, Պարսկական է. եւ ինչի՞ չենթադրել, որ այս տունը Պարթեւ-Արշակունի է, այլ Պարսկական մի հին իշխող — Աքեմենեան — տանից: Եթէ Պարթեւ-Արշակունիները Ատրոպատէնին, Ոսրոէնին, Էլամին-Կամնասկիրեսին Արշակունի արեւնակից թագաւորներ են տալիս, տներ են հաստատում, ինչի՞ պիտի չենթադրել, որ Պոնտոսի Միհրդատների տոհմն էլ Արշակունիներից էին եւ ո՛չ թէ Աքեմենեան:

Ինչպէս յայտնի է Պարթեւների տոհմը Իրանի եւ Անիրանի գահը Աքեմենական Իշխանութիւնը ձեռք անցնելուց յետոյ, իրանք իրենց յայտարարեցին հելլենասէր կամ յունասէրներ, դրոշմեցին դրեթէ սկզբնական բոլոր թագաւորները իրենց դրամների վրայ Արամազդի, Ապոլլոնի, Հերակլէսի եւ Ափրո-